

ԽՈՍՏՈՎԱՆՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ

Խոստովանութիւնը Աստուծոյ կողմէ մեզի տրուած մեծ բարիք եւ պարգեւ է, նաեւ հոգիի կենդանութիւն եւ բժշկութիւն: (Մեր յաջորդ թիւին մէջ, սիրելի ընթերցող, պիտի փոխանցենք քեզի Խոստովանութեան մասին):

Շատեր տգիտութեան հետեւանքով յիմարաբար կորսուած են մեղքերու մէջ եւ գրկած են իրենց անձերը խոստովանութեան շնորհքէն: Բազմաթիւ են անոնք, որոնք առանց խոստովանութեան ու հաղորդութեան կը մնան: Ոմանք՝ որովհետեւ չեն գիտեր խոստովանութեան շնորհքն ու բարիքը, ուրիշներ՝ անչնալուն եւ վախնալուն համար չեն խոստովանիր, իսկ ուրիշներ՝ որովհետեւ ընկղմած ու կորսուած են մեղքերու մէջ, չեն ուզեր ազատիլ սատանայի ծառայութենէն:

Արդ, մի՛ անգիտանաք. խոստովանութիւնը բժշկութիւն է հոգիներու համար, փախուստ է դժոխքէն, ազատութիւն է սատանայէն եւ յարութիւն է մահէն: Հետեւաբար, կը պատուիրենք, որ ամէն Կիրակի եկեղեցոյ դուռը երթաք եւ խոստովանիք: Քահանային ներկայութեան ձեր ունեցած փոքր վախով ու ամօթով կը փրկուիք այն մեծ ամօթէն, որ տիեզերական ասեղ հրապարակին վրայ տեղի պիտի ունենայ, այն մեծ Կիրակին, որ անփոխարինելի է՝ երբ մարդոց բոլոր ծածուկ ու գաղտնի գործերը պիտի յայտնուին:

ՈՒՐԱՐ



Սարկաւագութեան խորհրդանիշն ու աստիճանը բացայայտող ուրարն է: Հինգ մատնաչափ լայնով եւ երկու հասակ երկայնքով, թաշեայ, սաեղնագործ եզրերով եւ այն ժապաւեանման կտորն է, որ սարկաւագներ իրենց ձախ ուսին կը դնեն եւ, որ առջեւէն ու ետեւէն մինչեւ շապիկին ծայրամասը կ'իջնէ:

Ուրարը խորհրդանիշն է լուծին Սարկաւագութեան ձեռնադրութեան ընթացքին, ձեռնադրիչ եպիսկոպոսը հետեւեալ բանաձեւումով ուրարը ընծայալին ուսին տեղադրելով կ'ըսէ. «Մեր Տիրոջ Յիսուս Քրիստոսի ձեռքէն ա՛ն մաքուր եւ սուրբ այս ուրարը, եւ մեղքի բոլոր պատրանքները թօթափէ երբ իր ներկայութեան կը հագնիս: Կեանքդ ու վարքդ օրինակ թող ըլլան այս ժողովուրդին, որ սուրբ հաւատքով Քրիստոսի միացած է, որպէսզի տեսնեն, թէ կը կատարես այն բաները որոնցմով կրնաս հասնիլ կեանքին, այսինքն՝ մեր Տիրոջ Յիսուս Քրիստոսի հետ միութեան: Անիկա յաւիտեան օրհնեալ է: Ամէն»:



ԲՈՒ ԽՍՐԷՂ ԽՆ ՌՅԵՐՈՒՄ ԵՐԱԳ Է ՈՒ ԽՆ ՇԱԽՂՆԵՐՈՒՄ ԼՈՅՍ (ՍՂ.119.105)

ԺԵ. ՏԱՐԻ

ԿԻՐԱԿԻ, 20 ՓԵՏՐՈՒԱՐ 2022

ԹԻՒ 8

ԿԻՐԱԿԻ ՕՐԵՐՈՒ ԱՍՏՈՒԱԾԱՇՆԱԿԱՆ ԸՆԹԵՐՅՈՒՄՆԵՐ

Ես.63.18-64.12: Տիտ. 1.1-11 Յհ.7.37-52

ՅԻՍՈՒ ՔՐԻՍՏՈՍԻ ԱՒԵՏԱՐԱՆԸ ԸՍՏ ՅՈՎԱՆՆԵՍԻ 7. 37-52

Տօնին վերջին եւ հանդիսատար օրը, Յիսուս ոտքի կանգնած՝ բարձրաձայն կ'ըսէր. «Ով, որ ծարաւ է՝ թող ինձի գայ եւ խմէ: Ով, որ ինձի կը հաւատայ, ինչպէս Սուրբ գիրքը կ'ըսէ. «Անոր սիրտէն կենսատու ջուրի գետեր պիտի բխին»»:

Յիսուս ասիկա կ'ըսէր Հոգիին համար, որ իրեն հաւատացողները պիտի ընդունէին, իսկ Հոգին տակաւին չէր տրուած, քանի Յիսուս փառաւորուած չէր:

Ժողովուրդէն ոմանք, երբ լսեցին այս խօսքերը, ըսին. «Ասիկա է ճշմարիտ մարգարէն»:

Ուրիշներ կ'ըսէին. «Քրիստոսն է»:

Իսկ ոմանք ալ կ'ըսէին. «Միթէ Գալիլեայէ՞ն պիտի գայ Քրիստոսը: Սուրբ գիրքը չ'ըսէր, թէ Քրիստոս Դաւիթ թագաւորի սերունդէն պիտի ըլլայ եւ Դաւիթի քաղաքին՝ Բեթլեհեմի մէջ պիտի ծնի»:

Եւ Յիսուսի պատճառով տարակարծութիւններ յառաջ եկան ժողովուրդին մէջ: Ոմանք ուզեցին ձերբակալել զինք, բայց ոչ ոք համարձակեցաւ ձեռք զարնել:

Երբ տաճարին պահակները վերադարձան, աւագ քահանաներն ու փարիսեցիները հարցուցին անոնց. «Ինչո՞ւ զինք հոս չբերիք»:

Պահակները պատասխանեցին. «Այս մարդուն պէս խօսող երբեք չենք տեսած»:


Փարիսեցիները ըսին. «Ի՞նչ, դո՞ւք ալ խաբուեցաք: Իշխանաւորներէն կամ փարիսեցիներէն ոեւէ մէկը հաւատա՞ց անոր: Մեր օրէնքը չգիտցող տգետ ամբոխը միայն հաւատաց: Անոնք արդէն իսկ նզովուած են»:

Նիկողդեմոս, Փարիսեցիներէն մէկը, որ նախապէս գիշերով եկած էր Յիսուսի մօտ, ըսաւ անոնց. «Արդեօք մեր օրէնքը մարդս կը դատէ՞ նախքան զինք լսելը եւ գիտնալը, թէ ի՞նչ ըրած» է:

Անոնք պատասխանեցին Նիկողդեմոսի. «Միթէ դո՞ւն ալ Գալիլեայէն ես: Քննէ՛ Սուրբ գիրքերը եւ պիտի տեսնես, թէ Գալիլեայէն մարգարէ չ'ըլլեր»:

Ապա ամէն մարդ իր տունը դարձաւ:

Ս. ՍԱՀԱԿ ՊԱՐՔԵՒ ԶԱՅՐԱՊԵՏ



Ս. ՍԱՀԱԿ Ա ՊԱՐՔԵՒ
387 - 436

Ս. Սահակ Պարթեւ Ս. Գրիգոր Լուսավորիչի տոհմէն, Մեծն Ներսէս Կաթողիկոսի որդին էր: Անոր ապրած կեանքի, վարած հայանպաստ ֆաղափականութեան մասին մանրամասն տեղեկութիւններ կը հաղորդէ հինգերորդ դարու պատմիչ՝ Դազար Փարպեցին իր «Հայոց պատմութեան» աշխատութեան մէջ:

Ս. Սահակ Պարթեւ Հայրապետ ծնած է Կեսարիա, 384 թուականին: Սուրբը կը ստանայ յունական կրթութիւն եւ կը դառնայ հմուտ ժամանակակից երաժշտական ու հոնտորական արուեստին եւ փիլիսոփայութեան: Ս. Սահակ կ'ապրի իր հօր հոգածութեան ներքեւ: Թէեւ ֆաջ գիտակ էր յունարէն, ասորերէն եւ պարսկերէն գրականութեան, բայց աւելի խելամուտ էր Սուրբ Գրիգորի ընթերցանութեան: Կը սիրէր աղօթել եւ լեցուն էր Աստուծոյ Հոգիով ու շնորհներով: Չափահաս դառնալէն ետք շրջապատը կը ստիպէ, որ Ս. Սահակ Պարթեւ մնայ աշխարհական, որպէսզի շարունակուի Լուսավորիչի տոհմը: Ան յաջողաբար Աստուծմէ կը խնդրէ, որ իրեն արուզուակ մը պարգեւէ: Սակայն կը ծնի Սահականուշը:

Վաղարշապատ մայրաքաղաքի մայր եկեղեցւոյ մէջ Աւագ Հինգշաբթի օր, պատարագի ընթացքին, Ս. Սահակ, որպէս սարկաւագ պետք է սպասուորներ:

Պատարագի աւարտին, երբ ան նստած էր Ս. Սեղանին մօտ, վրան թմրութիւն մը կու գայ: Աստուծոյ հրեշտակը լուսաւոր մարդու կերպարանով կ'երեւի եւ կը յայտնուի, որ պիտի դադրի Լուսավորիչի տան ֆահանայապետութիւնը, իսկ Արշակունեաց թագաւորութիւնն ալ պիտի խափանուի:

Ս. Սահակ կը նուիրուի ֆահանայապետական կարգին եւ միաժամանակ կը հոգայ եկեղեցւոյ պետքերը: Իր Սահականուշ դուստրն ալ կնութեան կու տայ Համագասպ Մամիկոնեանին:

387-ին, կը ձեռնադրուի կաթողիկոս:

Հակառակ տիրող ֆաղափական անբարեկամաստ պայմաններուն, հայոց Վոստանայուի թագաւորի եւ Ս. Սահակ կաթողիկոսի համատեղ ջանքերով երկիրը կ'ապրի խաղաղութեան մէջ ու կը բարգաւառուի: Վոստանայուի բարեպաշտ թագաւորի օգնութեամբ ձեռնամուխ կ'ըլլայ բազմաթիւ վանքեր ու եկեղեցիներ կառուցելու եւ միաժամանակ կը նորոգէ Ս. Հոփսիսիմեանց վկայարանը: Որոշ ժամանակ ետք միաբանելով Ս. Մեսրոպի հետ, կը զբաղի հայոց նշանագիրներ գտնելու սուրբ գործով: Իր աշակերտները կ'ուղարկէ զանազան ֆաղափներ, որպէսզի գտնեն բազմաթիւ օգտակար գիրքեր, հայերէնի թարգմանեն եւ գործածեն հայոց դպրութեան մէջ: 417-ին Ս. Սահակ կը դիմէ Կայսեր եւ Կ. Պոլսոյ պատրիարքին, իր թոռան՝ Վարդան Մամիկոնեանի հայոց սպարապետ նանչնալու խնդրանքով: Կայսրն ու Պատրիարքը յարգելով Հայրապետը կ'ընդառաջեն անոր խնդրանքին:

Հ ՈԳԵՒՈՐ ՊԱՏ ԳԱՍ

ՍԱՏԱՆԱՆ ԿՐ ՅԱՐՁԱԿԻ ՄԵՐ ՏԿԱՐՈՒԹԵԱՆ ՊԿՆԵՐՈՒՄ

Յիսուս քառասուն օր եւ քառասուն գիշեր ծոմապահութեամբ անցնելէ ետք՝ անօթեցաւ: Այն ատեն փորձիչը՝ Սատանան, մօտեցաւ իրեն (Մտ. 4.2-3): Սատանան միայն քառասուն օրերու աւարտին չէր, որ փորձեց Յիսուսը, այլ՝ քառասուն օրեր շարունակ, ինչպէս Դուկաս կ'ըսէ. «Յիսուս քառասուն օր փորձուեցաւ Սատանային (Ղկ. 4.2): Յարձակումը սակայն սաստկացաւ քառասուն օրերու աւարտին, երբ Յիսուս անօթեցած եւ տկարացած էր արդէն»:

ՄԵՐ ՍՈՐՎԵԼ ԻՔ Հ ՈԳԵՒՈՐ ԴԱՍԸ

Սատանան ուշի ուշով կը դիտէ հաւատացեալները, կը սպասէ անոնց տկարանալուն եւ անոնց տկարութեան պահերուն է, որ անոնց վրայ կը յարձակի: Արթուն եւ զգոյշ ըլլանք: Սատանան շատ լաւ գիտէ, թէ մենք երբ եւ ինչ բանի դիմաց կը տկարանանք: Աղօթքով սպառազինուինք եւ ջանանք մեր տկար կէտերը զօրացնել, բնաւ առիթ տուած չըլլալու համար Սատանային (Եփ. 4.27):

ԱՌԱՎ 2

Վա՛յ անոնց, որոնք ուղիղ ճանապարհը թողած՝ խաւար ճամբաներէ կը քալեն, որոնք կ'ուրախանան չարիք գործելով եւ կը խնդան դէպի չարը խտտորելով:

ԵՅԷ ԿԱՍ ԵՐԲ ԿՈՒՉԵՍ...

ԵՅԷ ԱՆՐԱՎՈՒՄԸ ԵՍ ԱՐԿԱՐՈՒԹԻՒՄ ԿՐ ՓՆՏՈՒՄ, Կարդա՛. - ՍԱՂՄՈՍ 55

Ականջ տուր աղօթքիս, ո՛վ Աստուած, խնդրանքս մի անտեսեր: Նայէ՛ ինձի եւ պատասխան տուր: Հոգիս տրտում կ'ալեկոծի եւ խռովքի կը մատնուիմ թշնամիին սպառնալիքներէն եւ ամբարիշտներու տուած նեղութիւններէն, որովհետեւ անիրաւութիւն կը թափեն զիսուս եւ բարկութեամբ ոխ կը պահեն ինձի դէմ: Սիրտըս տագնապի մէջ է, մահուան սարսափը պատեր է զիս: Ահ ու դողը բռնէր է զիս եւ սուկումը զիս համակեր: Երանի թէ աղանիի պէս թե ունենայի, հեռու թոչէի, հանգիստ գտնէի: Այո՛, հեռու՝ հեռու՝ փախչէի, անապատը բնակէի: Շուտով ինձի ապաստան գտնէի սաստիկ հովէն ու փոթորիկէն: Խառնէ՛, ո՛վ Տէր, բաժնէ՛ անոնց լեզուները, որովհետեւ քաղաքին մէջ միայն վայրաւորին եւ հակառակութիւն կը տեսնեմ, որոնք անոր պարիսպներուն վրայ կը շրջին օր ու գիշեր, եւ զայն կը լեցնեն յանձագործութեամբ ու դժբախտութեամբ զայն կը լեցնեն ատերածութեամբ: Բռնութիւնն ու նենգութիւնը անպակաս են անոր հրապարակներէն:

Բայց ան, որ զիս կը նախատէ՝ թշնամի մը չէ, այլապէս՝ դիւրաւ պիտի տանէի: Ան, որ զիս կ'արհամարիտ՝ ոտիս չէ, այլապէս՝ հեռու պիտի մնայի: Այլ՝ դո՛ւն, ո՛վ մարդ, իմ հաւասարս, դուն՝ իմ ընկերս իմ մտերիմս, որուն հետ մենք անոյշանոյշ զրոյց կ'ընէինք եւ միասնաբար Աստուծոյ տունը կ'երթայինք: ՇԱՐՈՒՆԱԿԵԼ ՍԱՂՄՈՍԱԳԻՐՔԷՆ